


ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ
ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՍՈՐԻՔԸ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ
Դ.-Ե. ԴԱՐԵՐ

Լևոն Տէր-Պետրոսեանի նոր/հին գիրքը*

Պատմա-մշակութային տեսակէտից հայ-ասորական յարաբերութիւնների պատմութիւնը իրենից ներկայացնում է հայ-արամէական յարաբերութիւնների պատմութեան շարունակութիւնը: Երկու դէպքում էլ մօտաւորապէս նոյնն են յարաբերութիւնների էթնիկական, լեզուական, տնտեսական եւ աշխարհագրական պայմանները: Արմատական փոփոխութեան են ենթարկւում միայն քաղաքական եւ գաղափարախօսական հանգամանքները: Գ. դարում պատմութեան թատերաբեմից անհետանում են արամէական վերջին պետական կազմաւորումները՝ Օսրոյենէի եւ Պալմիրայի թագաւորութիւնները (դրանից մի փոքր առաջ այդ բախտին էին արժանացել նաեւ՝ Ադիարէնի եւ Նաբաթէայի արամէական թագաւորութիւնները): Նոյն Գ. դարում Օսրոյենէում քրիստոնէութիւնը ճանաչւում է որպէս պետական կրօն, որ շուտով ընդունւում է նաեւ Ասորիքի ու Հիւսիսային Միջագետքի ողջ բնակչութեան կողմից: Այսպէս, նշուած ժամանակաշրջանում քաղաքականապէս կազմակերպուած հեթանոս արամէացիներին փոխարինելու են գալիս քաղաքականութիւնից դուրս մնացած քրիստոնեայ ա-

* Մաշտոցի անուան Մատենադարանի հրատարակութեամբ լոյս տեսած է Լևոն Տէր-Պետրոսեանի «*Армения и Христианская Сирия. Культурные связи. IV-V вв.*» ռուսերէն մեմագրութիւնը (Անտարես, Երևան 2022), որ անոր վարդապետական ատենախօսութիւնն է՝ պաշտպանուած 1987 թուականի Փետրուարի 26ին, Լեւոնիկրատի համալսարանի մէջ: Գիրքի մասին պատկերացում կազմելու նպատակով կը ներկայացնեմք մեմագրութեան հայերէն ամփոփումը:

րամէացիները, այլ կերպ կոչուած ասորիներ: Զրկուելով քաղաքական իշխանութիւնից ասորիները, սակայն, շարունակում են պահպանել իրենց նախնիների նշանակալից դերը միջազգային տարանցիկ առեւտրի ասպարէզում, որ նոր պայմաններում արդէն կողմնակիօրէն ուղեկցւում էր քրիստոնէութեան տարածման առաքելութեամբ:



ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ «Հայաստանը և Քրիստոնեայ Ասորիքը: Մշակութային կապեր: Դ.-Ե. Դար»
 ուսերէն մեմագրութեան շապիկը:

ԱՍՈՐԻ ՔԱՐՈՋԻԶՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
 Գ.-Դ. ԴԱՐԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՅՈՑ ԴԱՐՁԸ

Սկսած Բ. դարի վերջերից՝ հայ-ասորական աւանդական առեւտրական կապերի յետագայ ծաւալումը յանգեցնում է Հայաստանում ասորի քարոզիչների ջանքերով առաջին քրիստոնէական համայնքների կազմակերպմանը: Դրան անշուշտ նպաստում էր

նաեւ Մեծ Հայքի հարաւային նահանգներում՝ Աղձնիքում եւ Կորդուքում հայ-ասորական խառը բնակչութեան առկայութեան հանգամանքը: Առաջին ասորի քարոզիչը, որն ըստ աղբիւրների, գործել է Հայաստանում եւ իր գործունէութեան ընթացքում նոյնիսկ գրել է Հայոց պատմութեանը նուիրուած մի աշխատութիւն, նշանաւոր գնոստիկեան մտածող Բարդաժան Ասորին է: Յետագայում նրան յաջորդում են Յակոբ Մծբնացին, Դանիէլ Ասորին, Շաղիտան եւ ազգութեամբ ասորի մի շարք այլ գործիչներ: Եւ թէեւ նոր կրօնի վերջնական յաղթանակը Հայաստանում կապուած է Կապադովկիական-յուճական միջավայրի քարոզիչների անուան հետ, բայց անուրանալի է նաեւ ասորիների խաղացած դերը, առնուազն, Հայոց պետութեան հարաւային նահանգների քրիստոնէացման գործում: Դրա արտայայտութիւնը պէտք է համարել այն փաստը, որ ողջ Դ. դարում Հայոց եկեղեցու պաշտամունքային արարողութիւնը կատարուել է յունարէն եւ ասորերէն լեզուներով: Տուեալ իրողութեան մի այլ վկայութիւնն էլ այն է, որ Հայոց եկեղեցին իր առաքելական ծագումը հիմնաւորում է Թադէոս առաքեալի եւ Աբգար թագաւորի յարաբերութիւններին նուիրուած ասորական անվաւեր գրոյցի օգնութեամբ:

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳԻՒՏՏԸ, Ե. ԴԱՐԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ԱՍՈՐԵՐԷՆԻՑ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայոց այբուբենի ստեղծման հանգամանքները երկու կէտում խաչաձեււում են ասորական մշակութային միջավայրի հետ: Նախ Մաշտոցը երկու տարի փորձարկում է Դանիէլ Ասորու մօտ յայտնաբերուած հայկական գրերը եւ համոզուելով, որ նրանք անբաւարար են հայոց լեզուի հնչիւնական համակարգը վերարտադրելու համար, հրաժարւում է դրանցից: Եւ երկրորդ՝ սեփական, աւելի կատարեալ այբուբեն ստեղծելու նպատակով Մաշտոցն այցելում է ասորական գիտութեան կենտրոնները՝ Ամիդ, Եղեսիա, Սամոսատ, որտեղ եւ իրականացնում է իր մտայղացումը:

Գրերի գիւտից անմիջապէս յետոյ Հայաստանում լայն ծաւալում է ստանում թարգմանական շարժումը, որի նպատակն էր հայերէնի վերածել քրիստոնէական գիտելիքների այն ամբողջութիւնը, որն անհրաժեշտ էր Հայոց եկեղեցու անմիջական կարիքների բաւարարման եւ հայ ազգային մատենագրութեան զարգացման համար: Մաշտոցն ու Սահակն այդ նպատակով իրենց աշակերտներին պարբերաբար ուղարկում են ժամանակի ասորական եւ

յունական մշակույթի նշանաւոր կենտրոնները՝ Եղեսիա, Կոստանդնուպոլիս եւ Աղեքսանդրիայ, որտեղ հմտանալով, թարգմանիչներն այնուհետեւ բոլորն գրական գործունէութիւն են ծաւալում:

Ե. դարի հայերէն թարգմանութիւնները կատարուել են բացառապէս երկու լեզուից՝ ասորերէնից եւ յունարէնից, ընդ որում ասորերէնից կատարուած թարգմանութիւնները ժամանակով նախորդել են յունարէնից կատարուած թարգմանութիւններին, թէեւ իրենց ընդգրկմամբ եւ ծաւալով բաւականին զիջում են վերջիններին: Երբեմն, ինչպէս, օրինակ, Աստուածաշնչի առանձին գրքերի դէպքում, նախապէս ասորերէնից կատարուած թարգմանութիւնները ճշգրտուել, խմբագրուել են յունական աւելի ստոյգ բնագրերի համեմատ: Աստուածաշնչի մեզ հասած հայերէն բնագիրը, որն իր վերջնական տեսքն ստացել է Ե. դարի երեսնական թուականներին, համարեայ բացարձակապէս համընկնում է յունական Եօթնասնից բնագրին: Սակայն մի շարք գրքերում՝ մասնաւորապէս աւետարաններում եւ սաղմոսներում ուսումնասիրողները վեր են հանել յունական բնագրից շեղուող բազմաթիւ ընթերցուածներ, որոնք բխում են Աստուածաշնչի ասորական խմբագրութիւնից: Դա վկայում է, որ առնուազն այդ գրքերը նախապէս թարգմանուած են եղել ասորերէնից, իսկ յետագայում խմբագրուել ըստ յունարէն բնագրի: Սկզբնապէս, ըստ երեւոյթին, առանձին խտրութիւն չի գրուել թարգմանուող երկերի սկզբնագրերի ընտրութեան հարցում եւ նոյնիսկ յունայ-բիւզանդական գրականութեան որոշ յուշարձաններ հայերէն են թարգմանուել ասորերէնից, ինչպէս, օրինակ, Եւսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութիւնը», Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքը» եւ այլն:

Ինչ վերաբերում է բուն ասորական գրականութեանը, ապա Ե. դարում նրանից հայերէն են թարգմանուել հետեւեալ յուշարձանները. Ափրահատ Զգօնի դաւանաբանական ժողովածուն, Զէնոբ Ամդեցու ճառերը, Այիթալա Եղեսացու «Հովուական քուղքը», Մարութա Նիրկերացու «Վկայք Արեւելից» ժողովածուն, Աբգարի գրոյցը, «Վարդապետութիւն առաքելոց» անվաւեր գրութիւնը, Գորիասի (Գորիա) եւ Սամոնասի (Շմոնա) վկայաբանութիւնը եւ մանաւանդ ասորական գրականութեան մեծագոյն ներկայացուցիչ Եփրեմ Ասորու երկերը, որոնցից շատերի ասորական սկզբնագրերը մեզ չեն հասել: Դրանք են՝ «51 կցուրդների ժողովածուն», «Նիկոմիդիայի 16 ողբերը», «Պօղոսի քղերի մեկնութիւնը», «Տատիանոսի Համաբարբառի (Դիատեսարոն) մեկնութիւնը» երկի կէսից աւելին, Ծննդոց, Եկից, Թուոց, Ղևտացուոց, Երկրորդ Օրինաց, Յետուի, Դա-

տաւորաց, Թագաւորութեանց եւ Մնացորդաց գրքերի համառօտ մեկնութիւնները, Յորի եւ Գործի Առաքելոց գրքերի մեկնութիւնների հատակոտորները, ինչպէս նաեւ մի շարք ճառեր, աղօթքներ եւ խրատներ: Հայերէն թարգմանութիւնների շնորհիւ պահպանուած այս երկերը մեծ աւանդ են մուծում հայրաբանական գրականութեան ուսումնասիրման բնագաւառում, քանի որ կազմում են արեւելեան հայրաբանութեան մեծագոյն հեղինակութիւնը հանդիսացող Եփրեմ Ասորու մատենագրական ժառանգութեան մի նշանակալից մասը: Եփրեմ Ասորու ստեղծագործութիւններից բացի Ե. դարի հայերէն թարգմանութիւնների շնորհիւ փրկուել եւ մեզ են հասել նաեւ ասորական գրականութեան մի շարք այլ յուշարձաններ, ինչպէս՝ Այիթայա Եղեսացու «Հովուական քուղթը», Ջէնոր Ամդեցու ճառերը, «Վկայի Արեւելից» ժողովածուի ներածութեան մեծ մասը, Յագղանդուխտի վկայաբանութիւնը եւ այլն: Ասորերէնից կատարուած թարգմանութիւնները մեծ ազդեցութիւն են գործել հայ ինքնուրոյն մատենագրութեան վրայ, մասնաւորապէս Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքը»՝ բնագիտական մտքի բնագաւառում, Եւսեբիոսի «Եկեղեցական պատմութիւնը»՝ պատմագրութեան մէջ, Եփրեմ Ասորու գործերը՝ մեկնողական եւ «Վկայի Արեւելից» ժողովածուն՝ սրբախօսական գրականութեան սեռերում: Այսպէս, ասորական գրականութիւնը ներկայանում է որպէս հայ մատենագրութիւնը սնող երկու հիմնական աղբիւրներից մէկը՝ յունայ-բիւզանդական գրականութեան կողքին:

ՅՈՒՆԱՍԷՐ ԵՒ ԱՍՈՐԱՍԷՐ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Դ.-Ե. ԴԱՐԵՐՈՒՄ

Հայաստանում յունական եւ ասորական ազդեցութեան ուրուանների գոյութեան հանգամանքը բնականաբար պատմագիտութեան մէջ յարուցել է յունասէր եւ ասորասէր հոսանքների պայքարի հարցը, համարուելով «Հայոց եկեղեցու Դ. եւ Ե. դարերի պատմութեան էական միւթը» (Ե. Տէր-Մինասեան): Սակայն հետազօտողներից շատերն այս հարցում ընկել են որոշ չափազանցութեան մէջ: Մասնաւորապէս համոզիչ չէ այդպիսի պայքարի արտայայտութիւն համարել Գրիգոր Լուսաւորչի եւ Մանգկերտի եպիսկոպոս Աղբիւնոսի տների միջեւ եղած տեւական մրցակցութիւնը: Ասորական կուսակցութիւնը Հայաստանում նկատելի պայքար է ծաւալել միայն սկսած Ե. դարի երեսունական թուականներից, ինչը բացատրւում է հետեւեալ հանգամանքով:

410 եւ 424 թուականների ժողովներով Պարսկաստանի ասորախօս քրիստոնէութիւնը վերջնականապէս ձեւաւորուեց որպէս առանձին եկեղեցի եւ պաշտօնապէս ճանաչուեց սասանեան արքունիքի կողմից: Օգտուելով այն հանգամանքից, որ Հայոց պետականութեան վերացմամբ Հայաստանի մեծ մասը յայտնուեց Սասանեան տէրութեան կազմում՝ Պարսկաստանի ասորական եկեղեցին, անշուշտ պարսիկների դրդմամբ, փորձեց իր ազդեցութիւնը տարածել նաեւ Հայոց եկեղեցու վրայ եւ դառնալ ողջ քրիստոնեայ բնակչութեան ներկայացուցիչը արքունիքի առջեւ: Վերջինս ընդառաջ գնաց ասորիների նկրտումներին, յոյս ունենալով, ըստ երեւոյթին, հայերին անջրպետել յունական ազդեցութիւնից: Դրա ապացոյցը պէտք է համարել այն փաստը, որ Ե. դարի երեսնական թուականներին Հայոց եկեղեցու կաթողիկոսական գահին յաջորդաբար յայտնուում են երկու ասորի հոգեւորականներ՝ Բրքիշոյ եւ Շմուէլ եպիսկոպոսները: Պարսկաստանի ասորական եկեղեցին՝ այլ կերպ կոչուած Արեւելից եկեղեցի, հայերի իրաւունքների նկատմամբ որոշ ոտնձգութիւններ է կատարում նաեւ Ե. դարի 60-80-ական թուականներին, երբ պաշտօնապէս որդեգրում է արեւմտեցում հալածուած նեստորական ուսմունքը: Նման միջնորդարի պայմաններում միանգամայն հասկանալի է դառնում Ղազար Փարպեցու ծայրաստիճան անհանդուրժողականութիւնը ասորիների եւ ասորական մշակոյթի նկատմամբ:

ՆԵՍՏՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Նեստորականների՝ Հայաստանում ծաւալած գործունէութեան առաջին յիշատակութիւնը կապուած է Սահակ Պարթեւի եւ Մաշտոցի անունների հետ: Եփեսոսի ժողովից (431) յետոյ, որին հայերը չէին մասնակցել, Կոստանդնուպոլսի Պրոկղ եւ Մելիտենէի Ակակ եպիսկոպոսները առանձին թղթերով Հայոց եկեղեցու առաջնորդներին զգուշացնում են նեստորական վարդապետութեան մոլորութիւնից: Սահակն ու Մաշտոցը պատասխան թղթերում յայտնում են, որ իրենք վճռական միջոցառումներով կանխել են նեստորական քարոզութիւնը Հայաստանում: Նեստորականութիւնը Հայաստանում աւելի համարձակ գործողութիւնների է դիմում յատկապէս Ե. դարի ութսունական թուականներին, երբ սասանեան արքունիքի հովանաւորութեամբ այն ճանաչուում է Պարսկաստանի ասորախօս եկեղեցու պաշտօնական դաւանանքը: Ողջ Զ. դարը նշանաւորում է նեստորականութեան դէմ Հայոց

եկեղեցու մղած անընդհատ պայքարով, որի ընթացքում վերջինս երբեմն դիմում է նոյնիսկ աշխարհիկ իշխանութիւնների օգնութեանը: Նեստորականութեան հարցը քննարկուել է Հայոց եկեղեցու երկու ժողովներում՝ 506 եւ 554 թուականներին, որոնք վճռականորէն դատապարտել են այդ ուսմունքը եւ նշուել նրա հեղինակութիւններին՝ Նեստորին, Թէոդորոս Մոպսուեստացուն, Դիոդորոս Տարսոնացուն, Թէոդորետոս Կիւրացուն, Բարժումայ Մծրնեցուն եւ այլն: Նեստորականութիւնը Հայաստանում փորձել է յենուել Հայոց եկեղեցուց դժգոհ տարրերի, մանաւանդ մծղնէից աղանդի մնացուկների, ինչպէս նաեւ Հայոց ազդեցութեան տակ գտնուող ժողովուրդների վրայ, օգտագործելով նրանց եւ հայերի ազգային հակասութիւնները: Յայտնի է, օրինակ, որ Զ. դարի վերջում եւ է. դարի սկզբում նեստորականները որոշ յաջողութիւն են ունեցել Վրաստանում եւ Աղուանքում՝ յարուցելով Հայոց եկեղեցու առաջնորդների զայրոյթը: Նեստորականների եռանդուն գործունէութիւնը Հայաստանում բացատրում է այն հանգամանքով, որ, ինչպէս վերը նշուեց, նրանք վայելում էին պարսից արքունիքի աջակցութիւնը: Սասանեան կայսրութեան վերացմամբ այդ գործունէութիւնը փաստօրէն լիովին դադարում է: Դա ցոյց է տալիս, որ ի տարբերութիւն քաղկեդոնականութեան, որ հայերի մէջ միշտ էլ բաւականին կողմնակիցներ է ունեցել, նեստորականութիւնը Հայոց եկեղեցու համար ներկայացրել է միայն արտաքին վտանգ, չկարողանալով որեւէ կերպ ազդել նրա ներքին կեանքի վրայ:

ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ԱՌՆՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ Զ.-Թ. ԴԱՐԵՐՈՒՄ

Վահան Մամիկոնեանի ապստամբութիւնից յետոյ, երբ Սասանեան արքունիքը ճանաչում է Հայոց եկեղեցու իրաւունքները եւ հրաժարւում հայերի դաւանանքի նկատմամբ վարած դաժան քաղաքականութիւնից, հայ-ասորական յարաբերութիւնների վիճակը լրիւ փոխւում է: Այժմ արդէն ասորիներն իրենք են դիմում հայերի օգնութեանը, եւ ընդհակառակն, Հայոց եկեղեցին է սկսում ազդեցութիւն գործել ասորական եկեղեցու առանձին հատուածների վրայ: Դաւանաբանական վէճերի հետեւանքով Ե. դարի վերջում ասորական եկեղեցին կորցրել էր իր երբեմնի հզօրութիւնը: Բիւզանդական կայսրութեան ասորի հպատակները բռնել էին միաբնակութեան կողմը, իսկ Պարսկաստանում բնակուող ասորիները, ինչպէս նշուեց, որդեգրել էին նեստորական ուսմունքը: Սա-

կայն Պարսկաստանի հիւսիս-արեւմուտքում դեռեւս կային որոշ ասորաբնակ շրջաններ, որտեղ նեստորականութիւնը չէր կարողացել հաստատուել: Այդ շրջանների հոգեւոր առաջնորդները, քաղաքական անջատուածութեան պատճառով հնարաւորութիւն չունենալով դիմել Բիւզանդական Ասորիքի իրենց ազգակիցներին, Զ. դարի սկզբից սկսում են մերձեցման ուղիներ որոնել Հայոց եկեղեցու հետ: Այսպէս, 505/6 թուականին Պարսից աշխարհից Բաբգէն կաթողիկոսի մօտ են գալիս մի քանի ասորի հոգեւորականներ եւ խնդրում պարզել Հայոց եկեղեցու դիրքորոշումը նեստորականութեան նկատմամբ, որովհետեւ նեստորականները լուր էին տարածել, թէ իրենց եւ հայերի դաւանանքը նոյնն է: Այս փաստը վկայում է, որ Հայոց եկեղեցին հարեւան եկեղեցիների մէջ մեծ հեղինակութիւն էր վայելում եւ նրա կարծիքը բաւականին կշիռ ունէր դաւանաբանական հարցերում: Հայոց եկեղեցու ազդեցութեան միւս կարեւոր վկայութիւնն է այն փաստը, որ Զ. դարի կէսերին Ներսէս Բ. կաթողիկոսը Աղձնիքի միաբնակ ասորիների խնդրանքով նրանց համար եպիսկոպոս է ձեռնադրում Արդիշոյ երէցին: Դրանից առաջ էլ Նինուէի մերձակայքի ասորիների համար մի եպիսկոպոս էր ձեռնադրել Հայոց Քրիստափոր Ա. կաթողիկոսը (539–545): Անտիոքի պատրիարքութիւնից կտրուած այս թեմի եպիսկոպոսները յետագայում եւս շարունակել են ձեռնադրուել Հայոց կաթողիկոսների կողմից, մինչեւ հաւանաբար Է. դարի սկիզբը, երբ բիւզանդացիների առաջխաղացմամբ հնարաւոր եղաւ վերականգնել կապը Անտիոքի հետ: Այս փաստերը ցոյց են տալիս, որ Հայոց եկեղեցին, ըստ էութեան, դարձել էր Սասանեան տէրութեան բոլոր միաբնակ քրիստոնեաների հոգեւոր առաջնորդը:

Եթէ արաբական նուաճումներից առաջ Հայոց եկեղեցին հիմնականում չփլուծւում էր միաբնակ ասորիների առանձին թեմերի հետ, ապա այդ նուաճումների հետեւանքով հնարաւորութիւն է ստեղծւում սերտ կապեր հաստատել նաեւ բուն Ասորիքի Յակոբիկեան պաշտօնական եկեղեցու հետ: Յայտնուելով մէկ պետութեան՝ Արաբական ընդարձակ խալիֆայութեան կազմում, հայերն ու ասորիները ձգտում են միասնական ճակատ կազմել քաղկեդոնականութեան դէմ: Այդ նպատակով Հայոց կաթողիկոս Յովհան Օձնեցին եւ Յակոբիկների Աթանասիոս պատրիարքը 726 թուականին Մանազկերտում ժողով են գումարում եւ Հայոց ու Ասորոց եկեղեցիների միջեւ միութիւն հաստատում: Գործը գլուխ բերելու համար կողմերը ստիպուած են լինում փոխադարձ գիջումներ կա-

տարել ղաւանաբանական հարցերում: Մանագկերտի ժողովը ղաւարագլուխ է կազմում հայ-ասորական յարաբերութիւնների պատմութեան մէջ, նշանաւորելով հայ եւ ասորի ժողովուրդների ղաւչինքը Բիւզանդական կայսրութեան նուաճողական քաղաքականութեան դէմ:

Հայ-ասորական յարաբերութիւնների մէջ քննութեան առարկայ պատմական ժամանակաշրջանում արձանագրուած վերջին նշանակալից դէպքը վերաբերում է Թ. դարին: Ապիկուրայ անունով քաղկեդոնական մի եպիսկոպոս փորձում է Աշոտ Բագրատունի Հայոց իշխանին (855–884) դարձնել երկաբնակութեան գիրկը: Լսելով այդ, ասորի Բուրետ վարդապետը նրա մօտ է ուղարկում Նանայ սարկաւագին, որ վիճաբանութեան մէջ պարտութեան է մատնում Ապիկուրային, եւ Աշոտ իշխանը վերջինիս վտարում է Հայաստանի սահմաններից: Նանան, ըստ երեւոյթին, դրանից առաջ էլ կապուած է եղել հայ իրականութեան հետ, քանի որ Բագրատ Բագրատունի իշխանի համար 840-ական թուականներին գրել է «Յովհաննու աւետարանի մեկնութիւնը»: Ի դէպ, այս մեկնութիւնը նոյնպէս ասորական գրականութեան այն յուշարձաններից է, որ պահպանուել է միայն հայերէն թարգմանութեամբ:

ԱՍՈՐԵՐԷՆԻ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ

Հայ-ասորական ղարաւոր առնչութիւնները բնականաբար իրենց դրոշմն են թողել նաեւ հայոց լեզուի վրայ: Ասորերէնի ազդեցութիւնը նկատելի է յատկապէս հայերէն բառապաշարի եւ ասորերէնից կատարուած թարգմանութիւնների շարահիւսութեան բնագաւառներում: Վերջին հանգամանքը ուսումնասիրողներին հիմք է տուել ղասական հայերէնում առանձնացնել, այսպէս կոչուած, Եփրեմեան ղասը՝ կազմուած բացառապէս ասորերէնից կատարուած թարգմանութիւններից: Այս ղասի մէջ մտնող գրական յուշարձաններից շատերը աչքի են ընկնում ոճական-շարահիւսական ասորաբանութիւնների առատութեամբ, հայերէնին խորթ խնդրառական կիրառութիւններով, ասորերէնից պատճէնուած ղարձուածաբանական կապակցութիւններով: Ինչ վերաբերում է հայոց լեզուում առկայ ասորական բառամթերքին, ապա նրանում ղանագանւում է երեք հիմնական ղերտ՝ ա.- հնագոյն արամէական փոխառութիւններ, բ.- նախագրային ղրջանի ասորական փոխառութիւններ եւ գ.- մատենագրական փոխառութիւններ: Իմաստի

տեսակէտից ասորական փոխառութիւնների մէջ առանձնանում է երկու հիմնական խումբ՝ ա. – ապրանքների, գործիքների եւ ընդհանրապէս առեւտրի հետ կապուած հասկացութիւնների անուններ (ամիւս, անագ, գգաթ, գուրպայ, քանգար, խանութ, ծոքոք, կաթսայ, կացին, հաշիւ, կուպր, ձէթ, ձիւթ, մագաղաթ, մանգաղ, մաքս, մտրակ, շղթայ, սուսեր եւ այլն) եւ եկեղեցական-մշակութային հասկացութիւններ արտայայտող բառեր (աբեղայ, ադին, աքուքայ, քարգման, ծով, կնիք, հեգեմայ, մածրացի, շաբաթ, ուրբաթ, սատանայ, սոփեր, փիլիսոփայ, քահանայ, քաղղեայ, քարոզ, քուրմ եւ այլն), որոնցում իրենց արտացոլումն են գտել հայ եւ ասորի ժողովուրդների առեւտրական եւ հոգեւոր կապերը: Դասական հայերէնում վկայուած են նաեւ հարիւրաւոր ասորական անձնանուններ ու տեղանուններ, որոնցից սակայն քչերն են տեղ գտել հայոց լեզուի հիմնական բառապաշարում (Եգր, Եղիշէ, Եփրեմ, Մայդան, Մուր, Մուշէ, Յորդանան, Յովնան, Շմաւոն, Շուշան եւ այլն): Ուշ միջնադարում ասորերէնն իր հերթին որոշ փոխառութիւններ է կատարել հայերէնից: Իսկ հնագոյն դարերից ասորերէնում վկայուած են միայն կտաւ եւ ինձոր հայերէն բառերը:

Ինչպէս յայտնի է, ուսումնասիրողների կողմից դասական կամ ոսկեդարեան հայերէնում առանձնացուել է բացառապէս ասորերէնից կատարուած թարգմանութիւններն ընդգրկող Եփրեմեան դասը: Աւելի ճշգրիտ կը լինէր, սակայն, այդ դասը, Յովնաբան հայերէն եւ Լատինաբան հայերէն հասկացութիւնների նմանողութեամբ, կոչել Ասորաբան հայերէն: Սա ամենեւին չի նշանակում, անշուշտ, որ Ասորաբան հայերէնը նոյնքան նշանակալից ազդեցութիւն է գործել գրաբարի յետագայ զարգացման վրայ, որքան Յովնաբան հայերէնը: Այս տեսակէտից նրանց ազդեցութեան ծաւալները պարզապէս անհամեմատելի են: Դա, անշուշտ, բացատրւում է ոչ այնքան ասորականի նկատմամբ յունական մշակոյթի անհամեմատ բարձր մակարդակի իրողութեամբ, որքան հնդեւրոպական եւ սեմական լեզուների քերականական կառուցուածքների արմատական տարբերութեամբ: Այսինքն, խօսքը վերաբերում է ոչ թէ սոսկ մշակութային, այլ զուտ լեզուական հանգամանքի: Հոլովման եւ խոնարհման նոյնատիպ համակարգերով, ինչպէս նաեւ շարահիւսական ճկունութեամբ օժտուած հնդեւրոպական հին լեզուները միանգամայն համադրելի էին, հետեւաբար, փոխադարձ ազդեցութիւնները հեշտութեամբ կարող էին մարսուել միմեանցից կատարուած փոխառութիւնների եւ թարգմանութիւնների պարագայում: Բաւական է նշել, թէ սկզբնական

շրջանում հայերէնի համար որքան արհեստական ու խորթ պիտի թուային յունարէնի նմանողութեամբ ստեղծուած բայական նախածանցները (ապ, արտ, բաց, գեր, եմք, հալ, շար, տրամ, վեր, տար եւ այլն), որոնք, սակայն, ժամանակի ընթացքում այնքան ընտանի դարձան, որ այսօր էլ կազմում են արդի հայերէնի բայական համակարգի ձկունութեան, բառակազմութեան եւ գիտական եզրաբանութեան հարստութեան հիմքը:

Ինչ վերաբերում է քերականական բոլորովին այլ կառուցուածք ունեցող սեմական լեզուներին, տուեալ պարագայում ասորերէնին, ապա միանգամայն հասկանալի ու բնական է, որ վերջինս չէր կարող հայերէնի վրայ նոյնչափ ազդեցութիւն ունենալ, որքան յունարէնը կամ հնդեւրոպական որեւէ այլ լեզու: Անշուշտ, դա ամենեւին չի նշանակում, որ ժամանակակից հայերէնում իսպառ բացակայում են ասորերէնի ազդեցութեան հետքերը: Երկու ժողովուրդների դարաւոր կենդանի շփումների եւ թարգմանութիւնների ճանապարհով կատարուած փոխառութիւնների ու բառապատճէնումների մի պատկառելի քանակ այսօր էլ տեղ է գրադեցնում մեր գրական եւ խօսակցական լեզուի ամենագործածական բառերի շարքում: Հետեւաբար, ասորական գրականութեան եւ, մանաւանդ, ասորերէնի ազդեցութիւնը հայ մշակոյթի եւ հայոց լեզուի վրայ ոչ թէ սոսկ պատմական փաստ է, այլեւ այսօր էլ մեզ ուղեկցող կենդանի իրողութիւն: Այս ամէնով հանդերձ, հարկ է չմոռանալ նաեւ այն անառարկելի ճշմարտութիւնը, որ հայերէնը, որպէս գրաւոր լեզու, գրերի գիւտից յետոյ անմիջապէս ձեւաւորուել է ասորերէնից կատարուած թարգմանութիւնների շնորհիւ, ինչի համար մենք յաւերժ երախտապարտ պէտք է լինենք ասորի ժողովրդին:

Sommario

L'ARMENIA E LA SIRIA CRISTIANA LEGAMI CULTURALI NEI SECOLI IV-V

TER-PETROSSIAN LEVON

Nell'anno 2022 è stato pubblicato dall'Istituto Mesrob Mashdotz del Matenadaran di Yerevan, in lingua russa, il libro di Levon Ter-Petrossian, noto assirologo armeno, intitolato "L'Armenia e la Siria Cristiana. Legami culturali nei secoli IV-V, dalle edizioni "Antares" a Yerevan. È la tesi dottorale del noto assirologo armeno, difeso nell'Università statale di San Pietroburgo, allora chiamata Università statale di Leningrado, il 26 febbraio del 1987.

L'autore esplicita le circostanze storiche politiche e religiose del legame e dell'influenza culturale reciproca, fondata sul cristianesimo, che formano la base di una ricchezza letteraria trasmessa attraverso la traduzione di autori assiri di cui le opere originali sono andati perduti.